

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, հիմնախնդիր, վարկավորում, մեթոդներ, սուբսիդիա, զարգացում:

**ՀՏԴ 339.187.62**

## ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՈՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐԻՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆ

Վտենախոսության թեմա՝  
**ՀՀ տնտեսության ազարարային հատվածի վարկավորման  
համակարգի ձևավորման հիմնախնդիրները և  
հեռանկարները**

**Սուրեն ԴԱՎԹՅԱՆ**

ՀՊՏՀ բանկային գործի և  
ապահովագրության  
ամբիոնի ասպիրանտ

Գիտական դեկավար՝  
**ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գյուղատնտեսությունը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, իսկ այդ ոլորտի աշխատանքի արտադրողականությունն ու ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները, որոնք էլ, իրենց հերթին, եական ազդեցություն են ունենում բնակչության կենսամակարդակի վրա: Այն նաև մուլտիպլիկատորի ազդեցությունն է ունենում ազգային տնտեսության մյուս հատվածների վրա՝ հատկապես նրանց, որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում:

Գյուղատնտեսության ֆինանսները, ինչպես և ազգային տնտեսության մյուս ճյուղերի ֆինանսները, կատարում են միևնույն ֆունկցիաները, այն է՝ վերարտադրության ընթացքում եկամուտների կազմավորում, արտադրության նկատմամբ վերահսկողություն, եկամուտների բաշխում և օգտագործում, արտադրության զարգացման, արտադրողների նյութական խրախուսման, բյուջեի եկամուտների կազմավորման և այլ նպատակներով:

Գյուղատնտեսության ֆինանսավորումը ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցների, մասնավորապես բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտին բնորոշ հատկանշական ռիսկերով:

Գյուղատնտեսության ոլորտի վարկավորումը չի կարող լինել պետության մենաշնորհը: Այս ոլորտի պահանջարկը վարկային միջոցների նկատմամբ շատ ավելի է, քան պետության կողմից առաջարկվող ֆինանսական ռեսուրսները: Բացի այդ, գյուղատնտեսության արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների կողմից վարկային միջոցների օգտագործումն անընդհատ և բնականոն երևույթ է: Այս պարագայում խիստ կարևոր է ֆինանսավորման այնպիսի համակարգի ստեղծումը, որը գործում է նույն անընդհատության սկզբունքով, հավաքագրելով ազատ դրամական միջոցներ տնտեսության մեջ և ուղղորդելով դեպի դրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնող ոլորտները, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտ: Վերջինս, ազատ շուկայական տնտեսական համակարգ ունեցող ցանկացած երկրում, իրականացվում է ֆինանսական շուկայի միջոցով: Հետևություն անելով, կարելի է եզրակացնել, որ միայն ֆինանսական շուկայի միջոցով գյուղատնտեսության վարկավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծմամբ կարելի է խոսել ոլորտի պահանջարկին համապատասխան կայուն ու երկարատև վարկավորման մասին, որն անկախ կլինի պետական միջոցների վերաբաշխման գերակայություններից և դրանց մեծությունից:

Հայաստանի Հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում, պայմանավորված բնական և արտադրական պայմանների տարբերությամբ, առկա է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունների ակնհայտ անհավասարություն: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, նման իրավիճակում պետական կարգավորիչ գործիքը գյուղատնտեսության սուբսիդավորումն է, որը նպատակամետ ձևով կիրառվում է նաև գյուղատնտեսության ոլորտի առավել կարևոր արտադրությունների խթանման համար:

Սուբսիդիան սովորաբար սահմանվում է որպես կառավարության կողմից տրված գումար, որպեսզի կարգավորի այն գործունեությունը, որը նա ցանկանում է զարգացնել:

Պետական այս ծրագիրն ունի նաև խոցելի տեղեր: Նախ և առաջ տրամադրվող գումարը հեռու է բավարար լինելու՝ տարեկան տրամադրվել է 15 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 7.5 մլրդ-ը գարնանը, մարտ ու մայիս ամիսներին և մյուս 7.5 մլրդ-ը՝ աշնանը, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին: 2011թ.-ից սկսած մինչև 2017թ.-ը՝ Սուբսիդավորում՝ ծրագրով տրված վարկերի 95%-ից ավելին տրամադրվել է ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ՝ ՓԲԸ-ի միջոցով, չնայած, որ Սուբսիդավորում՝ ծրագիրը հասանելի է եղել նաև հանրապետության մյուս առևտրային բանկերին: Բանկերի գերակշիռ մասը խուսափել է այս գործընթացին մասնակցելուց, ելնելով մի շարք պատճառներից: Նախ չունեն գյուղատնտեսություն վարկավորելու փորձ, մեխանիզմներ, համապատասխան մասնագետներ և նաև շահավետ չի այս վարկերի տրամադրումը, քանի որ, ցածր տոկոսադրույթից բացի, չկան նաև այլ կարգի ոչ տոկոսային եկամուտներ, որը դարձնում է այս վարկատեսակը բանկերի համար ոչ այնքան հետաքրքիր և շահեկան:

Աղյուսակ 1-ի միջոցով ներկայացնենք 'ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ' ՓԲԸ-ի կողմից 2011-2016թթ. տրամադրված սուբսիդավորված վարկերի վերաբերյալ հաշվետվությունը:

Աղյուսակ 1.

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 2011-2016թթ. տրամադրված սուբսիդավորված վարկերը

Անվանում	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
	Սուբսիդավորված վարկեր /մլրդ. ՀՀ դրամ/	16.4	14.0	20.0	13.5	15.2
Քանակը /հառ/	24,555	16,526	19,428	14,043	21,489	20,436

Այս վարկերն ուղղվել են շրջանառու միջոցների ձեռք բերմանը, ընթացիկ խնդիրների՝ անասնակեր, վառելանյութ, սերմացու, պարարտանյութ և այլ խնդիրների լուծմանը: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ ամենայն հավանականությամբ վարկերի մի մասը ծառայել է սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը, որը ևս կարևոր հանգամանք է հանդիսացել գյուղացուն գյուղին կապելու, չարտագաղթելու, գյուղում սոցիալական լարվածությունը թուլացնելու համար: Իհարկե այս հանգամանքը չի տեղավորվում գյուղացիական տնտեսությունների զարգացման, վարկերի նպատակային օգտագործման, ՀՀ առանց այն էլ սուղ բյուջեի միջոցներից հատկացված գումարների հասցեականության տրամաբանությունում, սակայն այն ընդհանուր առմամբ դրական միտում է գյուղացիական տնտեսություններին մատչելի պայմաններով վարկերի տրամադրման մոտեցման ուղղությունում:

Հասկանալի է, որ 15 մլրդ ՀՀ դրամը մեկ տարվա ընթացքում կարող է բավարարել ընդհանուր պահանջարկի գուցե 10%-ը, սակայն վարկավորման պրոցեսը 'ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ' ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է այնպես, որ վարկի համար դիմած ամեն մի տնտեսությանը հատկացվի միջինը մոտ 700,000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ, չնայած առավելագույն շեմը հաստատված է եղել 3 մլն ՀՀ դրամ:

Ակնհայտ է, որ այդ փոքր գումարներով հնարավոր չէ լուրջ ծրագրեր իրականացնել, սոր տեխնիկա ձեռք բերել կամ կապիտալ այլ ներդրումներ կատարել, որոնք պահանջում են թե գումարային զգալի ներդրում, և թե ավելի երկար մարման ժամկետ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման առումով պետք է ակնկալել ոչ միայն պետական աջակցություն ու մասնակցություն գյուղատնտեսության ֆինանսավորման և վարկավորման ծրագրերի իրականացման ուղղությամբ, այլև՝ մասնավոր կապիտալի ընդգրկմամբ:

Գյուղատնտեսության վարկավորումը դեռևս մնում է ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը՝ կապված վարկավորման ոչ մատչելի պայմանների՝ գրավի առարկայի, ժամկետների և տոկոսադրույքի հետ, որոնք դժվարամատչելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար: Ուստի կարևորելով պետական միջոցներով նպատակային օգտագործման ու սուբսիդավորման իրականացումը՝ պետք է ընդունել, որ թերևս վարկավորմանը և սուբսիդավորմանն ուղղված միջոցները դեռևս բավարար չեն ոլորտի առջև ծառայած ֆինանսավորման հիմնախնդրի լուծմանը: Անհրաժեշտ է իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք կնպաստեն, առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող մասնավոր կապիտալ օգտագործվի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող սուբյեկտների նպատակների իրագործման համար: Ուստի այս առումով պետք է գործեն այնպիսի վարկավորման շուկայական մեխանիզմներ, որոնց պարագայում գյուղատնտեսության վարկավորումը փոխշահավետ կլինի ինչպես ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների համար՝ ապահովելով այնպիսի գյուղատնտեսական արտադրանքի ծավալներ, որոնք կարող են ապահովել գյուղատնտեսական մասնագիտացման ուղղությունների զարգացումը՝ միաժամանակ ակտիվացնելով ոլորտի զգալի մաս կազմող գյուղացիական տնտեսությունների գործունեությունը:

Գյուղատնտեսության ֆինանսավորումը կատարվում է բանկային համակարգի միջոցով, որն իրականացվում է ինչպես սեփական, այնպես էլ տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների և պետության կողմից տրամադրվող ֆինանսական հնարավորությունների միջոցով:

Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորման հարցերով այս կամ այն չափով զբաղվում են մի շարք ոչ պետական տեղական և միջազգային կազմակերպություններ, առևտրային բանկեր և վարկային կազմակերպություններ: Ֆինանսավարկային հաստատությունների մեծամասնությունը, ելնելով գյուղատնտեսության առանձնահատկություններից, խուսափում է գործարքի մեջ մտնել մանր և միջին գյուղատնտեսողների հետ: Նշված կատեգորիայի տնտեսությունների վարկավորման հարցերով զբաղվում է հիմնականում բանկերից՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը, իսկ վարկային կազմակերպություններից կառանձնացնելի 'ՖԻՆԵԿ' ՈՒՎԿ-ին: Չնայած գյուղացիական տնտեսությունների վարկավորմամբ զբաղվում են նաև 'Կամուրջ', 'Արեգակ', 'Ֆարմ Կրեդիտ', 'Ֆայթ Կրեդիտ', 'ՍԵՖ Ինտերնեյշնլ' և այլ կազմակերպություններ: Հարկ է նշել նաև, որ Հայաստանյան առևտրային բանկերի մոտ զգացվում է դրական տեղաշարժ գյուղացիական տնտեսությունների վարկավորման առումով: Դա նաև պայմանավորված է նրանով, որ ՀՀ ԿԲ 27 սեպտեմբերի 2016թ.-ի թիվ 159-Ն որոշման հիման վրա առևտրային բանկերի սեփական կապիտալի շեմը 5 մլրդ ՀՀ դրամից հասցվեց 30 մլրդ ՀՀ դրամի, որի արդյունքում որոշ բանկեր միավորվեցին, որպեսզի ապահովեն 30 մլրդ ՀՀ դրամի շեմը, իսկ որոշներն էլ համալրեցին սեփական կապիտալը: Այս գործընթացը բերեց մի իրողություն, որ բանկերում առկա են ֆինանսական մեծ միջոցներ և անբաշխակալ խնդիր դրանք տեղաբաշխելու: Հարկ է նշել նաև, որ այդ գումարների մի մասը ուղղվել է գյուղատնտեսության ոլորտ:

Ագրարային ոլորտի մեծամասշտաբ վարկավորմանը խոչընդոտող գործոններից է վարկավորման ողջ շղթային կազմակերպման հետ կապված մեծ ծախսերը, որոնցից առանձնանում են.

-Վարկառուի տնտեսություն վարկատու կազմակերպության մասնագետների այցելության նպատակով կատարված տրանսպորտային ծախսերը, որոնք վարկառուի վարկային կենսագրություն չունենալու դեպքում խիստ անհրաժեշտ են՝ տվյալ տնտեսության եկամուտ-ծախսեր, փաստացի ակտիվներ, ապագա եկամուտներ և այլ ֆինանսական վերլուծություններ կատարելու համար, որպեսզի կարողանան որոշում կայացնել վարկի տրման, չափի, ժամկետների, վարկի և նրա հաշվարկվող տոկոսների մարումների միջակայքերի և այլ գործոնների հետ կապված:

Ներկայումս գյուղատնտեսության վարկավորման դժվարություններից է ՀՀ դրամային արժույթով ռեսուրսների առկայությունը, որն ավելի պահանջված է գյուղացիական տնտեսությունների կողմից հասկանալի պատճառով՝ գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու նպատակով ձեռք բերվող նյութերը՝ սերմացու, պարարտանյութ, թունաքիմիկատներ, վառելանյութ և այլն, ինչպես նաև մատուցվող ծառայությունները՝ վար, ցանք, ագրոտեխնիկական

միջոցառումների իրականացում, բերքահավաք և այլն կատարվում է ՀՀ դրամով: Ինչպես նաև ստացված մթերքները իրացվում են Հայաստանի հանրապետությունում նույնպես ՀՀ դրամով:

Ներկայումս առևտրային բանկերի համար գյուղատնտեսության բնագավառի վարկավորման 'գլխացավանքներից' է դարձել արտազան աշխատանքի մեկնողների ընտանիքների վարկավորումը: Տղամարդը մեկնելով արտազան աշխատանքի փորձում է Հայաստանում մնացող իր ընտանիքի համար ստեղծել ապրելու ու տնտեսություն վարելու միևնույն պայմաններ՝ ստանում է գյուղատնտեսական վարկ, ապահովում տնտեսությանը անհրաժեշտ հիմնական և շրջանառու միջոցներով, ստացված վարկից գնում է մեկնելու տոմսը, հուսալով, որ արտազան աշխատանքի արդյունքում ստացած գումարների հաշվին կմարի վարկի գումարը: Հաճախ բանկը կանգնում է երկընտրանքի առջև՝ տրամադրել վարկ կասկածելի նպատակային ուղղվածությամբ և անորոշ մարման հեռանկարով, թե մերժի տվյալ սեգմենտի վարկավորումը: Այս կատեգորիայի վարկառուների զգալի մասը մեծ դժվարություններով են մարում վարկերը հասկանալի պատճառներով՝ աշխատած գումարները չտալու, ուշացնելու, խաբվելու կամ այլ պատճառներով: Այնուամենայնիվ բանկերը ֆինանսավորում են արտազան աշխատանքի մեկնողների ընտանիքներին, քանի որ դրանց թիվը շատ մեծ է և չվարկավորելու պարագայում բանկերի վարկավորման ծավալները խիստ կնվազեն: Գաղտնիք չէ, որ գրեթե բոլոր մարզերում կան համայնքներ, որտեղ աշխատունակ տղամարդկանց գերակշիռ մասը մեկնում են արտազան աշխատանքի:

Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման օրինակ է 'ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ' ՓԲԸ-ի կողմից մշակված և արդեն կիրառության մեջ դրված արժեթղթերի ձևավորման և ֆինանսավորման գործընթացը:

Ներկա դրությամբ մշակվել և ներդրվել են արժեթղթերի 2 մոդելներ.

- 1-ին մոդել- Բանկ-Ֆերմեր-Մատակարար շղթայի ֆինանսավորում: Բանկի և գյուղատնտեսական նշանակության ապրանքների մատակարար հանդիսացող կազմակերպությունների /այսուհետև մատակարար/ միջև կնքվում է համագործակցության պայմանագիր, համաձայն որի Մատակարար կազմակերպությունից գյուղատնտեսական նշանակության ապրանքներ գնելու նպատակով վարկավորման դիմած Ֆերմերների համար առաջարկվում են վարկավորման արտոնյալ պայմաններ և վարկերի գումարները փոխանցվում են Մատակարարների Բանկում գործող հաշվեհամարներին: Մատակարարների կողմից Ֆերմերին տրամադրվում է նախահաշիվ, համաձայն որի հաստատվում է գյուղատնտեսական վարկի գումարը: Մատակարարին տրամադրվում է բանկի որոշման արձանագրությունը, որից հետո Ֆերմերին տրամադրվում է վարկի միջոցով ձեռքբերվող ապրանքը կամ ծառայությունը: Բանկի համար տվյալ համագործակցությունը կարող է լինել շահավետ ի հաշիվ կարճաժամկետ տրամադրված վարկերի և դրանց համար գանձվող միջնորդավճարների, ընդ որում միջնորդավճարներ գանձվում են և Ֆերմերներից և Մատակարարներից: Համագործակցության ծավալների մեծացմանը զուգահեռ նախատեսվում է, որ կավելանա Բանկի հաճախորդների թիվն ի հաշիվ Մատակարարների կողմից Բանկ ուղղորդված հաճախորդների: Միաժամանակ Բանկի կողմից տրամադրված վարկերի նպատակային օգտագործման ռիսկը հասցվում է նվազագույնի: Մատակարարների համար այս համագործակցությունը հանդիսանում է վաճառքների ծավալների ավելացման, հաճախորդների ներգրավման լրացուցիչ ուղի, ինչպես նաև տարածակետ վճարման պայմանով վաճառված ապրանքների ծավալի նվազեցում:

- 2-րդ մոդել- Բանկ-Ֆերմեր-Վերամշակող կազմակերպություն շղթայի ֆինանսավորում:

Գործարանի հետ պայմանագրային հիմունքներով աշխատող Ֆերմերների համար Բանկի կողմից մշակվել և սահմանվել են վարկավորման և քարտերի սպասարկման արտոնյալ սակագներ: Գործարանի կողմից Բանկին պարբերաբար ներկայացվելու է իր հետ համագործակցող Ֆերմերների ցուցակները և մթերված կաթի ծավալները: Ֆերմերների քարտային հաշիվներին փոխանցվելու են Գործարանի կողմից մթերված կաթի գումարներն ըստ սահմանված պարբերականության: Ներկա դրությամբ տարվում են աշխատանքներ կաթի արժեշղթայի կատարելագործման նպատակով: Մասնավորապես, նախատեսվում է ներդնել դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման և սպասարկման /Ֆակտորինգ/ համակարգ: Տվյալ համագործակցության մոդելի համար կիրառելի է հետպահանջի իրավունքով կամ ռեզրեսային ֆակտորինգը և առանց հետպահանջի իրավունքի կամ ոչ ռեզրեսային ֆակտորինգը: Հաշվի առնելով մթերվող կաթի ծավալները Գործարանի համար բացվում է սահմանաչափ, որի միջոցներից սահմանված պարբերականությամբ գումարները կարող են փոխանցվել Ֆերմերների հաշվեհամարին:

1-ին դեպքում Գործարանը սահմանված պարբերականությամբ Բանկին է տրամադրում կաթ մթերող Ֆերմերների ցուցակները և յուրաքանչյուրի կողմից հանձնած կաթի ծավալների վերաբերյալ տեղեկատվություն: Համաձայն ներկայացված ցուցակների, Գործարանին տրամադրված սահմանաչափի գումարներից կատարվում են փոխանցումներ Ֆերմերների բանկում գործող քարտային հաշիվներին, որի արդյունքում Գործարանի մոտ չեն ձևավորվում պարտավորություններ Ֆերմերների հանդեպ, փոխարենը ձևավորվում է պարտք Բանկի հանդեպ, որը Գործարանի կողմից ենթակա է մարման համաձայն Բանկի և Գործարանի միջև կնքված ֆակտորինգի պայմանագրի: Տվյալ դեպքում Գործարանի կողմից վճարումը կատարվում է Ֆերմերների կողմից փաստացի մթերված կաթի դիմաց:

2-րդ դեպքում Գործարանի կողմից տրամադրված ցուցակների հիման վրա Ֆերմերներին Բանկի կողմից կարող են տրամադրվել գյուղատնտեսական վարկեր, որոնց գումարները կմարվեն Գործարանի կողմից, համաձայն վճարումների սահմանված պարբերականության: Տվյալ դեպքում Ֆերմերներին տրամադրված վարկերը կդիտվեն որպես Գործարանի կողմից կատարված կանխավճար սպագայում ընդունվող կաթի դիմաց, այսինքն Ֆերմերների մոտ կձևավորվի պարտավորություն Գործարանի հանդեպ: Ֆերմերների կողմից գործարանի հանդեպ իրենց պարտավորությունները չկատարելու դեպքում բանկի հանդեպ չկատարված ֆինանսական պարտավորությունները կփոխանցվեն Ֆերմերներին: տվյալ դեպքը կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ Ֆերմերը կլուծի Գործարանի հետ կնքված պայմանագիրը և կիրառարվի կաթ հանձնել, կամ որևիցե պատճառով տեղի կունենա տնտեսության անկում, կնվազեն մատակարարվող կաթի ծավալները:

Բանկ-Ֆերմեր-Գործարան համագործակցության համար սահմանվելու են վարկերի և քարտային հաշիվների սպասարկման հատուկ սակագներ, գործարանի համար կարող է մշակվել նաև ծառայությունների փաթեթ:

Աշխարհում ընդունված գործելակերպ է, երբ պետությունը միջամտում է գյուղացիական տնտեսությունների վարկավորմանը՝ վարկային ռեսուրսներն ավելի մատչելի դարձնելու նպատակով: Ուղղություններից մեկի դեպքում վարկավորման գործընթացը թողնվում է առևտրային բանկերին, իսկ պետությունը ստանձնում է իր վրա բանկերի առջև վարկառուների պարտավորությունների զգալի մասը: Այս դեպքում, պետության տրամադրության տակ եղած միջոցները բազմաթիվ են: Ամենատարածված մեթոդներից է բանկերի կողմից տրամադրվող վարկերի վերադարձի ամբողջական կամ մասնակի երաշխավորումը կառավարության կողմից:

Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ստեղծված իրավիճակում, Հայաստանի Կառավարությունը հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների հետագա զարգացման ու դրանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով պետք է նախաձեռնի պետական երաշխիքների տրամադրման համակարգի ներդրման գործընթացը, որը այն տարածում է ստացել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում:

Այսպիսով, ուսումնասիրելով գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման առանձնահատկությունները կարելի է նկատել, որ գյուղատնտեսության բյուջեի տեսակարար կշիռը պետական բյուջեում 2010թ.-ից հետո ունեցել է նվազման միտում և միայն 2015թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աճ 0.5 տոկոսային կետով: Միաժամանակ կարևորելով գյուղատնտեսության ոլորտի վարկավորման գործընթացում առևտրային բանկերի ունեցած դերն ու նշանակությունը, պետք է նշել, որ ընդամենը 33 առևտրային բանկերի կոմիտեի գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումները ունեցել են անընդհատ աճման միտում 2014թ. կազմելով 150160 մլն դրամ<sup>1</sup>:

Այս ամենից հետևում է, որ 33 գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման գործում մեծ դեր ունի թե պետությունը և թե առևտրային բանկերը: Եվ միայն ֆինանսական շուկայի միջոցով գյուղատնտեսության վարկավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծմամբ և նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կարելի է արձանագրել ոլորտի կայուն, դինամիկ ու երկարատև զարգացում:

*Ներկայացվել է 18.02.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*

<sup>1</sup> \* ՀՀ ԿԲ «Վիճակագրության տեղեկագիր 2006», ՀՀ ԿԲ «Վիճակագրության տեղեկագիր 2008», ՀՀ ԿԲ «Վիճակագրության տեղեկագիր 2010», ՀՀ ԿԲ «Վիճակագրության տեղեկագիր 2012», ՀՀ ԿԲ «Վիճակագրության տեղեկագիր 2014»: